Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

97/4193/ 25 մայիսի 2012 ուրբաթ

ISSN 1829-2224

## «Բացառվում է, որ ԲՀԿ-ն ընդդիմություն դառնա, իրենց են ապահովագրում»



a«Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ Սուրեն Աբրահամյանը մեր այն դիտարկմանը, թե ԲՀԿ-ի՝ կոալիցիայի մեջ չմտնելով՝ փաստորեն ստացվեց, որ Լեւոն Տեր-Պետրոսյանին, այնուամենայնիվ, հաջողվեց սեպ խրել ԲՀԿ-ՀՀԿ-ի միջեւ ու ազատվել կոալիցիայից՝ այսպես պատասխանեց. «Բացարձակապես, որովհետեւ, ըստ իս, «Բարգավաճ Հայաստանն» ավելի շատ ձայն էր հավաքել, ինքը ոչ թե պիտի գնար, որ կառավարությանը հաջողություն մաղթեր, այլ ինքը պիտի կառավարությունը ձեւավորեր: Այ, այդ ժամանակ կասեին, որ համարձակ ու գնահատելի քայլ է արված»: «Հանրապետություն» կուսակցության՝ ՀԱԿ-ից դուրս գալու որոշման հիմնավորումներից մեկը հենց ԲՀԿ-ի հետ ՀԱԿ-ի համագործակցությունն էր: Այս առնչությամբ մեր դիտարկմանը՝ ԲՀԿ-ն այս քայլով, փաստորեն, իրեն տեսնում է ընդդիմության դաշտում, Սուրեն Աբրահամյանը չհամաձայնեց. «Այդքան դյուրահավատ մի՛ եղեք: Բացառվում է, որ իրենք ընդդիմություն դառնան: Հասկանում են ապագա դժվարությունները հանրապետության գլխին կանգնած, դրա համար իրենք իրենց են ապահովագրում ընդամենը»:

Ա

## Մրցակցությունը սրվում է

ԲՀԿ-ն չմտավ կառավարական կոալիցիա, ինչպես որ կանխատեսում էին այս հարցում հոռետեսական տրամադրություններ ունեցող մարդիկ, այդ թվում՝ նաեւ ես: Ինչո՞ւ հոռետեսական: Որովհետեւ անկախ նրանից, թե ինչու այդ կուսակցությունը գնաց այդ քայլին եւ ինչ է պատրաստվում անել հետագայում, զուտ պետության, պետական կարեւորագույն ինստիտուտի՝ ԱԺ-ի համար ԲՀԿ-ի՝ իշխանության հետ ամբողջությամբ չձուլվելը օգտակար է: Կարեւոր չէ, թե ով է լավը, ով վատը՝ խորհրդարանում ներկայացված բոլոր քաղաքական ուժերն էլ ունեն իրենց լուրջ արատները: Կարեւոր է, որ լինի մրցակցություն, տվյալ դեպքում՝ օրինագծերի, պետական խնդիրների լուծման ճանապարհների վերաբերյալ: Այո, ՀՀԿ-ն եւ ՕԵԿ-ն այս վիճակում էլ կարող են անցկացնել ցանկացած օրենք, բայց՝ ա/ մի բան է այն անցկացնել 66 ձայն կողմով, մեկ այլ բան՝ 100 կամ 100-ից ավելի ձայնով, բ/ իշխող կոալիցիան հնարավորություն չի ունենա խուսափելու վիճահարույց օրենքների մանրակրկիտ քննարկումից, գ/ 66 ձայնի համար անհրաժեշտ կլինի ապահովել բոլոր իշխանամետ պատգամավորների ներկայությունը, ինչը տեխնիկապես շատ դժվար կլինի, որովհետեւ հանրապետական պատգամավորների մի մասը (հատկապես՝ մեծամասնական) գերադասում է իր ժամանակն անցկացնել այլ վայրերում եւ ոչ խորհրդարանում: Այնպես որ՝ շատ ուրախ եմ, որ սխալվել եմ, եւ հիմա կարելի է արձանագրել, որ այս ընտրությունների արդյունքում ձեւավորվել է մի Ազգային ժողով, որը մի քիչ նման է օրենսդիր մարմնի:

ԲՀԿ-ի նման կեցվածքը նաեւ ավելի արդյունավետ կդարձնի խորհրդարանի աշխատանքը: Փոքրաթիվ ընդդիմությունը պարտադրված է խորհրդարանի ամբիոնն օգտագործել փողոցային պոպուլիզմի համար: Դրան պիտի հակադրվեն իշխանության թեւի ներկայացուցիչները, ասենք՝ Արտաշես Գեղամյանը կամ Հայկ Բաբուխանյանը՝ «բա որ դուք 1993 թվականին...» մոտիվներով: Այդ անպտուղ բանավեճում ԲՀԿ-ական պատգամավորները ստիպված կլինեին լռել, եթե կոալիցիայում լինեին: Հիմա նրանք, հուսով եմ, գործընկերների բուռն էներգիան կուղղեն կառուցողական հունով՝ ուշադրություն դարձնելով օրենքների, մեխանիզմների, թվերի, տոկոսների վրա:

Կրկնեմ, էական չէ՝ ճիշտ են ԲՀԿ-ի տեսակետները, թե սխալ: Էական է, որ դրանք գոնե որոշ չափով կարող են լինել այլընտրանքային, ինչը շատ կարեւոր է մեր հետագա զարգացման համար: Այնպես որ՝ «Բարգավաճի» այս քայլից շահում են բոլորը, նաեւ՝ հանրապետականները, որոնք այլեւս չեն կարողանա աշխատել «թուլացած ռեժիմով», հատկապես տնտեսության ոլորտում: Դա, ի վերջո, ձեռնտու է նաեւ նախագահին, որը խորհրդարանական ամբիոնից լսելով տարբեր տեսակետներ՝ կկարողանա ճշգրիտ որոշումներ ընդունել:

Չգիտեմ՝ որքանով կշահի կառավարությունը, որը չորս տարվա իր վատ աշխատանքը ներկայացնում է որպես լավ աշխատանք: Բայց նրանք էլ գուցե ինչ-որ բան կհասկանան:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### ՀՀԿ-ն կադրային որոշումներ չկայացրեց

ՀՀԿ գործադիր մարմնի նիստը երեկ սկսվեց նախատեսվածից մեկ ժամ շուտ: Նիստում ԱԺ-ին եւ կառավարությանը վերաբերող կադրային որոշումներ չկայացվեցին: ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը լրագրողներին միայն ասաց, որ ՀՀԿ-ն կստանձնի երկրի կառավարումը, կհամագործակցի նաեւ ՕԵԿ-ի հետ, քանի որ վերջինս արդեն հայտարարել է ՀՀԿ-ի հետ կոալիցիա կազմելու իր պատրաստակամությունը: Մինչեւ մայիսի 31-ը՝ նորընտիր խորհրդարանի առաջին նիստը, ՀՀԿ գործադիր մարմինը եւս մեկ նիստ կգումարի, որից հետո, թերեւս, պարզ կլինի ապագա կառավարության եւ խորհրդարանի կազմը:

Կարդացեք էջ**D**2:

### «Չեմ պատկերացնում, որ խոշոր կապիտալը կհեռանա իշխանությունից»

Երեկ անդրադառնալով ԲՀԿ-ի՝ կոալիցիա չմտնելու մասին հայտարարությանը՝ «Ժառանգության» ներկայացուցիչ Ստյոպա Սաֆարյանն ասաց. «ԲՀԿ-ն մտնի, թե չմտնի կոալիցիա, միեւնույն է՝ քաղաքական դաշտում նա իր տեղը չի փոխում: Ռիսկերը չեն փոխվում: Բացարձակապես կարեւոր չի, թե ինչ անուն կտրվի այն միավորին, որը դե ֆակտո գոյություն կունենա քաղաքական դաշտում: ԲՀԿ ոչ միայն կորիզը, այլեւ կազմը ռադիկալ ընդդիմադիր չէ, այս կուսակցությանը դեպի ընդդիմադիր դաշտ անցում կատարելու դեպքում լուրջ փորձություններ կսպասեն թե ներկուսակցական, թե ընտրազանգվածի առումով: Ընդդիմադիր հռետորաբանության միջոցով ձեռք բերված ընտրազանգվածը, վաղ թե ուշ, միեւնույն է՝ չի լինելու ԲՀԿ-ի ընտրազանգվածը: Հետեւաբար ԲՀԿ-ի տեղաշարժը հղի կլինի կուսակցության ներսում բազմաթիվ փոփոխություններով: Չեմ պատկերացնում, որ խոշոր կապիտալը կարող է հեռանալ իշխանությունից, կա Սուքիասյանների բիզնեսի օրինակը. ես գրեթե վստահ եմ, որ ԲՀԿ-ն չի կարող լինել ընդդիմադիր դաշտում»:

Կարդացեք նաեւ՝ էջ 3:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 13-ին, «Հայելի» ակումբի հյուրն է «Նոր ժամանակներ» կուսակցության ղեկավար Արամ Կարապետյանը:

### Եղանակ

Երեւան + 13 + 26, Շիրակ + 3 + 18, Կոտայք + 3 + 18, Գեղարքունիք + 3 + 18, Լոռի + 6 + 20, Տավուշ + 8 + 23, Արագածոտն լեռներ + 3 + 18, Արագածոտն նախալեռն. 10 + 25, Արարատ + 12 + 27, Արմավիր + 12 + 27, Վայոց Ձոր լեռներ + 3 + 18, Վայոց Ձոր նախալեռն. + 12 + 27, Սյունիքի հովիտներ + 10 + 27, Սյունիքի նախալեռներ + 5 + 20

## ՄՈՒՏՔԸ՝ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ

### Երեւանը անձրեւի տակ



Եթե օրենքը համընդհանուր կամքի վերացական արտահայտությունն է, ապա ընտրությունները պետք է, որ ստույգ պատկերը լինեն համընդհանուր կամքի: Ինչը որ, կարծես թե, մենք տեսանք մայիս ամսվա սկզբին:

Տրյումֆ սրճարանում մի գավաթ գարեջրի դիմաց նստած, ինքս ինձ այդպես մտածում էի: Եվ կամքիցս անկախ լսում էի կողքի սեղանին նստած իմ մտավորական ընկերների բարձրաձայն բանավեճը՝ թե մի քանի օր հետո ով կդառնա երկրի վարչապետ եւ ով կդառնա Ազգային ժողովի նախագահ: Նրանք մտահոգված մարդիկ էին եւ սիրում էին մեր երկիրը: Գիտնականներից մեկը գտնում էր, որ վատ է, որ չկայացավ խորհրդարանական մեծ դաշնությունը (կոալիցիա): Մյուսները պնդում էին, որ այդպես ավելի ճիշտ է, երբ մեկն է վերցնում երկրի պատասխանատվությունը եւ ինքն էլ շարունակում:- Բայց մյուս կուսակցությունները մեծ հավակնություն ու ցանկություն ունեին գործադիր իշխանությանը տիրանալու,- շարունակում էր երկրորդը:

Ես ականջի տակով լսում էի իմ ընկերներին եւ պատուհանից տեսնում, թե ինչպես է մայիսյան անձրեւը հեղեղում քաղաքը, եւ ինչպես են անցորդները պատսպարվում անձրեւից համատարած: Ես լսում էի նրանց ու հանկարծ հասկացա, որ մայիս շքնաղ ամիսը ավարտվում է, այսինքն թե՝ ավարտվում է գարունը նաեւ...

Եվ զբաղված ընտրություններով, այդպես էլ չնկատեցինք, թե երբ մի գարուն էլ անցավ մեր կյանքից: Նստած մտածում էի այդպես ու անսպասելի հիշեցի, թե ինչպես իմ մանկության արդեն հեռու տարիներին, բաց դաշտում կայծակը սպանել էր կթվորուհի Աշխենին: Եվ կանաչ, թաց դաշտի մեջ նրա սեւացած կոշիկներից կծու ծուխ էր ելնում: Դա զարմանալիորեն հենց նույն օրն էր, երբ մահացավ մեր գյուղի բոլորիս սիրելի փոստատարը: Հավաքվել էր գյուղը եւ լսում էին, թե ինչպես է ողբում նրա կինը.

- Ես քո բոյին մեռնեմ, քո խելքին մեռնեմ, քո բերած նվերներին մեռնեմ,- լալիս էր կինը եւ նրա հետ ներդաշնակ լաց էին լինում գյուղի կանայք: Մինչեւ այն պահը, երբ կինն ասաց.- Քո բուխար փափախին մեռնեմ: Եվ նրա կողքին նստած հարեւանուհին ընդհատելով իր լացը, շատ սթափ ու բոլորին լսելի ձայնով հարցրեց՝ինչո՞ւ, ինքը բուխար փափախ էլ ուներ: Եվ փոստատարի կնոջ ողբը եռապատկվեց՝չէ, չուներ, բայց միտք ուներ առնելու:

Մայիս էր, անցավ... Հիմա էլ է անցնում: Ու մտածում եմ՝ ինչ հետաքրքիր է կյանքը. տալիս են՝ չենք ուզում, ուզում ենք՝ չեն տալիս: Եվ այս անձրեւոտ օրվա մեջ հասկանում եմ պարզ մի բան, որ ուզելուց քո չափով պիտի ուզել: Եվ եթե տալիս են, հավատա, որ քո չափով է: Քանզի ափսոսում եմ մեր գյուղի փոստատարին, որ ուզում էր բուխար փափախ ունենալ եւ այդպես էլ չունեցավ:

Ընկերներս շարունակում էին վիճել, իսկ իմ գարեջրի գավաթը արդեն դատարկվել էր: Բայց անձրեւը շարունակվում էր Երեւանի վրա՝ որպես համընդհանուր կամք:

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

# ՀՀԿ-ն հարգում է ԲՀԿ-ի որոշումը

## Իսկ Հովիկ Աբրահամյանը խորհուրդ է տալիս ինտրիգներ չփնտրել, որովհետեւ «ամեն ինչ լավ է»

Aravot.am-ի հարցին՝ իրականությանը համապատասխանո՞ւմ են մամուլում շրջանառվող այն լուրերը, թե Գագիկ Ծառուկյանը Սերժ Սարգսյանին իրենց հանդիպումներից մեկի ժամանակ առաջարկել է ձեզ ԱԺ նախագահ կամ վարչապետ նշանակել, իսկ Սերժ Սարգսյանը հրաժարվել է, ՀՀԿ փոխնախագահ Հովիկ Աբրահամյանը պատասխանեց. «Չի համապատասխանում իրականությանը, եւ ես ճիշտ չեմ համարում, բոլոր առումներով, որ որեւէ կուսակցություն ինձ որեւէ պաշտոնում առաջարկի: Դա ոչ միայն կոռեկտ չէ, այլ նաեւ քաղաքական առումով ճիշտ չէ: Ես իմ կուսակցությունում այնքան հնարավորություններ ունեմ, որ որեւէ մեկի կարիքը չկա, որ ինձ որեւէ պաշտոնում առաջարկի՝ անկախ նրանից, թե ով է առաջարկում: Եթե այդպիսի բան լինի էլ, ես դա չեմ ընդունի»: Երեկ երեկոյան ՀՀԿ գործադիր մարմնի նիստի ավարտից հետո ՀՀԿ փոխնախագահ Հովիկ Աբրահամյանը լրագրողների հետ զրույցում հարցին՝ ի՞նչ ցանկություն ունի ինքը՝ ԱԺ նախագա՞հ, թե՞ վարչապետ դառնալու, ասաց, թե ցանկանում է, որ իր որդին արու զավակ ունենա: Երբ լրագրողները հստակեցրին, որ խոսքը քաղաքական ցանկությունների մասին է, Հովիկ Աբրահամյանը խորհուրդ տվեց սպասել եւ կոռեկտ չհամարեց որեւէ հայտարարություն անել՝ ասելով, թե կուսակցությունում կքննարկեն ու մինչեւ մայիսի 29-30-ը որոշումներ կկայացնեն, որոնց մասին կտեղեկացվի նաեւ հանրությունը: Հարցին՝ իսկ իրեն ո՞ր դաշտում է տեսնում՝ օրենսդիր, թե՞ գործադիր, Աբրահամյանը պատասխանեց՝ օրենսդիրում: Ճշտող հարցին՝ ԱԺ նախագահի՞ պաշտոնում, ասաց. «Կուսակցությունը չի որոշել, ո՞նց ասեմ, ճիշտ չի լինի»: Քննարկվե՞լ է, թե՞ ոչ իրեն ԱԺ նախագահի պաշտոնում ընտրելու հարցին էլ Հովիկ Աբրահամյանը հումորով պատասխանեց. «Այնքան բան ենք քննարկել»:





Լրագրողները հետաքրքրվեցին նաեւ, թե Սերժ Սարգսյան-Գագիկ Ծառուկյան՝ նախօրեին տեղի ունեցած հանդիպման ժամանակ ի՞նչ է տեղի ունեցել, որ ԲՀԿ-ն նեղացած հայտարարեց կոալիցիայից հրաժարվելու մասին, ՀՀԿ փոխնախագահն ասաց, թե ինքը հանդիպման մանրամասներին տեղյակ չէ, քանի որ ներկա չի եղել, բայց նաեւ ԲՀԿ-ի հայտարարությունից նեղացածություն չի զգացել: Պատասխանելով հարցին՝ հնարավո՞ր է, որ 2013-ին ԲՀԿ-ն հանդես գա նախագահի սեփական թեկնածուով, Հովիկ Աբրահամյանն ասաց, որ ինքն այդպես չի կարծում, իսկ ԲՀԿ-ն կսատարի՞ Սերժ Սարգսյանին՝ պատասխանեց. «Կապրենք՝ կտեսնենք»: Նա նաեւ ասաց, թե մամուլի համար պետք է կարեւոր լինի, որ ընտրությունները ընթացել են ազատ, արդար եւ թափանցիկ, իսկ թե ով մեկ նախարար կամ մեկ պորտֆել ավել կամ պակաս կունենա, ըստ նրա, այդքան էլ էական չէ: Հարցին, թե իր դիտարկմամբ՝ ԲՀԿ-ն այլեւս ընդդիմադի՞ր է, Հովիկ Աբրահամյանն ասաց, թե ինքն այդպես չի կարծում, եւ հավելեց, որ Գագիկ Ծառուկյանի հայտարարության մեջ խոսվում էր կառուցողական լինելու մասին: Իսկ ԲՀԿ-ն նոր ձեւավորվելիք կառավարությունում, այնուամենայնիվ, պորտֆելներ կունենա՞, թե՞ ոչ՝ Աբրահամյանը դարձյալ խորհուրդ տվեց սպասել: Նա նաեւ ասաց, որ պետք չէ ինտրիգներ փնտրել՝ «ամեն ինչ լավ է»:

ՀՀԿ գործադիր մարմնի նիստի ավարտից հետո ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովը լրագրողների հետ զրույցում անդրադառնալով «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի՝ ՀՀԿ-ի հետ կոալիցիա չկազմելու նպատակահարմարության մասին երեկ արած հայտարարությանը, ասաց, որ դա ԲՀԿ-ի որոշելիքն է, իրենց իրավունքն է, եւ ՀՀԿ-ում հարգում են իրենց գործընկերոջ այդ իրավունքը: Շարմազանովը նաեւ հայտարարեց, որ 2013թ. նախագահական ընտրություններում ՀՀԿ-ն նախագահի պաշտոնում առաջադրելու է Սերժ Սարգսյանի թեկնածությունը: Լրագրողներից մեկի հարցին՝ այդ դեպքում ի՞նչ ճակատագիր է սպասվում 2008թ.-ին ստորագրված կոալիցիոն հուշագրի այն կետին, որով կոալիցիա կազմած ուժերը հայտարարել էին նաեւ 2013-ին նախագահական ընտրություններում Սերժ Սարգսյանի թեկնածությունը պաշտպանելու մասին, ՀՀԿ մամուլի խոսնակն ասաց՝ այդ հարցը պետք է ԲՀԿ-ականներին ուղղել: Ինչ վերաբերում է ՀՀԿ-ի համար ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի հայտարարության անակնկալ լինել-չլինելու մասին հարցադրմանը, ապա Շարմազանովը պատասխանեց. «Քաղաքականության մեջ անակնկալներ չեն լինում: Պետք է բոլոր սցենարներն էլ հաշվարկվեն, անակնկալը քաղաքական կատեգորիա չէ»:

Շարմազանովը շեշտեց նաեւ, որ ՀՀԿ-ն շարունակելու է համերաշխությանն ու համագործակցությանն ուղղված իր քաղաքականությունը եւ պատրաստ է քննարկելու բոլոր առողջ առաջարկները՝ անկախ այն բանից, թե դրանք որ ճամբարից կհնչեն: Մայիսի 31-ին Ազգային ժողովի 5-րդ գումարման առաջին նիստին ընդառաջ՝ երեկ տարածած իր հայտարարության մեջ ՀՀԿ-ն շնորհակալություն է հայտնում ժողովրդին եւ քաղաքական ուժերին քաղաքակիրթ ընտրապայքարի համար եւ իր համար հպարտություն համարում, որ ՀՀԿ-ն այդ ընտրություններում մեծամասնություն ստացավ. «Ստանձնելով ԱԺ-ում քաղաքական մեծամասնությանը ՀՀ Սահմանադրությամբ վերապահված պատասխանատվությունների ողջ ծավալը՝ մենք, ինչպես եւ նախկինում, հանդես ենք գալիս որպես հանրային համերաշխության եւ բազմակողմանի համագործակցության համոզված կողմնակից: Այդ համատեքստում մենք պատրաստակամ ենք քննարկել ԱԺ-ում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի ցանկացած ողջամիտ առաջարկ՝ ի նպաստ մեր պետության զարգացման եւ յուրաքանչյուրի համար ավելի լավ Հայաստան կառուցելուն: Որպես պատասխանատու քաղաքական ուժ՝ մեր ավելի քան 20-ամյա գործունեությունը ծառայեցրել ենք անկախ պետականության կայացմանն ու ամրապնդմանը, արել ենք հնարավորը մեր երկրի ու ժողովրդի առջեւ ծառացած խնդիրների լուծման համար: ՀՀԿ-ն այսուհետ եւս, ստանձնելով հիմնական պատասխանատվություն, հաստատակամ է իր ծրագրերն իրականացնելու գործում»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Միակ դեպքն է, որ ԲՀԿ-ն քաղաքական կեցվածք դրսեւորեց»



Իր վերջին հարցազրույցներում «Նոր ժամանակներ» կուսակցության նախագահ Արամ Կարապետյանը բավականին թերահավատորեն էր վերաբերվում ԲՀԿ-ի՝ կոալիցիայից ձերբազատվելու հեռանկարին՝ վստահություն հայտնելով, որ Գագիկ Ծառուկյանը կընտրի «արթուրբաղդասարյանացման» ճանապարհը: Միաժամանակ ՆԺԿ նախագահը նշում էր, որ ԲՀԿ-ի՝ կոալիցիայից հրաժարվելու տարբերակը չի բացառվում, եթե «դրսից ճնշումներ» չլինեն:

Երեկ պատասխանելով Aravot.am-ի հարցին՝ Ձեզ անակնկալի բերե՞ց ԲՀԿ-ի հայտարարությունը՝ կոալիցիա կազմելու աննպատակահարմարության վերաբերյալ, պարոն Կարապետյանն ասաց. «Իմ հիշողության մեջ միակ դեպքն է, որ ԲՀԿ-ն քաղաքական կեցվածք դրսեւորեց եւ քաղաքական հայտարարություն արեց: Ես շատ ողջունում եմ, եթե, իհարկե, սա խաղ չէ՝ կապված Ռոբերտ Քոչարյանի դերի, հեռանկարի հետ: Այդ պարագայում այս ամենն առաջիկայում լուրջ դեր կարող է խաղալ»:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

### Հաստատվել են ՕԵԿ վարչական տարածքների ղեկավարները

Երեկ տեղի է ունեցել ՕԵԿ վարչության նիստ, որտեղ քննարկվել եւ հաստատվել են կուսակցությանը անդամագրման նոր կարգը եւ դրան համապատասխանող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը: Երեւան քաղաքի կուսակցական կազմակերպությունների համակարգող է ընտրվել ՕԵԿ փոխնախագահ Հեղինե Բիշարյանը, մարզային կառույցների աշխատանքները կհամակարգի ՕԵԿ փոխնախագահ Հովհաննես Մարգարյանը:

Ընտրվել են վարչական տարածքների խորհուրդների նախագահներ՝ ըստ Երեւան քաղաքի վարչական շրջանների եւ Հայաստանի Հանրապետության մարզերի:

Ըստ ՕԵԿ-ի մամուլի ծառայության՝ Երեւանի եւ ՀՀ մարզերի վարչական տարածքներում կձեւավորվեն համապատասխան խորհուրդներ, որոնք կշարունակեն ՕԵԿ շարքերի անդամագրումը տեղերում:

Ա aravot daily
ՈՒՐԲԱԹ 25.05.2012

# Եթե առաջիկայում ԲՀԿ-ում պառակտումներ, օբյեկտների կորուստներ չլինեն՝ ուրեմն խաղ է

## Ասում է «Ժառանգության» անդամ Ստյոպա Սաֆարյանը




«Եթե առաջիկա մի քանի ամիսներին ԲՀԿ-ի հետ ոչ մի լուրջ բան չպատահի՝ մենք կհասկանանք, թե իրականում ինչ է կատարվում»,- ԲՀԿ-ի՝ կոալիցիա չմտնելու քայլն Aravot.am-ի հետ զրույցում այսպես մեկնաբանեց «Ժառանգության» անդամ Ստյոպա Սաֆարյանը: Մենք հետաքրքրվեցինք՝ ի՞նչ պետք է լինի՝ Գագիկ Ծառուկյանը պետք է կորցնի՞ իր օբյեկտներից մեկը, որպեսզի հասկացվի, պարոն Սաֆարյանը բացատրեց. «Ես ոչ թե ուզում եմ, որ ինչ-որ բան պատահի: Բոլոր նրանք, ովքեր համարձակվել են ընդդիմության հետ լինել, ընդդիմությանը սատարել, այո, կորցրել են սեփականությունից մինչեւ կուսակցության համար էական, լուրջ մարդկային ռեսուրսներ՝ պառակտումներ են եղել: Իսկ ԲՀԿ-ում մենք գիտենք՝ ավելի քան առկա է մի այնպիսի զանգված, որը միշտ ցանկացել է, որ ԲՀԿ-ն մոտ լինի, ինչպես ընդունված է ասել, կերակրատաշտին: Եթե ԲՀԿ-ն շարունակի անդորրի մեջ գործել, իհարկե՝ այլ բան չի մնա մեզ, քան ենթադրել, որ գործ ունենք ներքին պայմանավորվածությունների հետ»: Մեր հարցին՝ իսկ եթե դա է՞լ բեմադրվի, պարոն Սաֆարյանը պատասխանեց՝ բեմադրելն ավելի վտանգավոր է. «Դա բեմադրելու դեպքում, այո, կարող են մի քիչ ընդդիմադիր երանգներ հաղորդել ԲՀԿ-ին, դա էլ չեմ բացառում, բայց, համենայնդեպս, ես խոսում եմ լուրջ կորուստների մասին, ինչն ունեցել են բոլոր ընդդիմադիր գործիչները»: Ի՞նչ պետք է անի ԲՀԿ-ն, որպեսզի Դուք էլ, ասենք, հավատաք, որ նա ընդդիմություն է. միասնական շտաբ մտավ, ասացիք՝ խաղ է, հիմա կոալիցիայից դուրս եկավ՝ էլի խաղ է:

Մեր այս դիտարկմանը պարոն Սաֆարյանը պատասխանեց. «Միասնական շտաբի հետ կապված՝ շատ ավելի անընդունելի էր այն, որ ԲՀԿ-ն, ճիշտ այնպես, ինչպես ՀՀԿ-ն, բաժանում էր ընտրակաշառքներ, այդ մասին ստացվում էին ահազանգեր, բայց նա առաջարկում էր պայքարել ոչ թե իր ընտրակաշառքների, այլ ՀՀԿ-ի ընտրակաշառքների դեմ: Սա, իհարկե, անազնիվ եւ անընդունելի էր, եւ ստացվում էր, որ այդ առաջարկն ընդունելու դեպքում «Ժառանգությունը» կդառնար ընդամենը այդ անազնիվ եղանակով բերված ձայները պահող մի կազմակերպություն, ինչի ցանկությունը մենք, բնականաբար, չէինք կարող ունենալ»:

Այնուամենայնիվ, ԲՀԿ-ի՝ կոալիցիա չկազմելու հայտարարությունը Ստյոպա Սաֆարյանի համար անակնկալ էր. «Ես ավելի շատ սպասում էի, որ նրանք կմտնեն կոալիցիայի մեջ, կլինեն ֆորմալ կոալիցիայի մեջ, բայց նաեւ չեմ զարմանում, որ «Բարգավաճ Հայաստանն» իրեն վերապահել է մի կարգավիճակ, որից, իմ հիշողությամբ, օգտվում էր 2007-ին «Օրինաց երկիրը»՝ ԱԺ-ում չլինելով կոալիցիայի մեջ, բայց նաեւ չլինելով ընդդիմության հետ: Հետեւաբար, վարքի այս մոդելը ես արդեն տեսել եմ 2007-2008-ին, թե ինչով դա ավարտվեց՝ մենք բոլորս տեսել ենք, այսինքն՝ դա ավարտվեց ՕԵԿ-ի՝ կոալիցիա մտնելով արդեն նախագահական ընտրություններից հետո: Ես հակված եմ մտածել, որ առաջին հերթին գործ ունենք այս մոդելի հետ: Սերժ Սարգսյանի եւ Հանրապետական կուսակցության հիմնական մտահոգությունները ոչ միայն 2013-ի՝ մինչեւ նախագահական ընտրությունների դաշտում են, այլ նաեւ հետընտրական զարգացումների, որովհետեւ ով՝ ով, բայց իշխանությունները հրաշալի գիտեն՝ եթե հետընտրական զարգացումներ չեն հաջորդում խորհրդարանական ընտրություններին, ապա դա չի նշանակում, թե դա չի լինելու նախագահական ընտրություններից հետո: Հետեւաբար նրանք հիմա պիտի շատ լուրջ տեխնոլոգիաներ մշակեն՝ հետընտրական զարգացումները 2013-ին բացառելու համար: Այս կապակցությամբ ԲՀԿ-ն եւ իր ազատ կարգավիճակը կարող են մեծապես օգտակար լինել»:

Ստյոպա Սաֆարյանի համոզմամբ՝ եթե ձայները ձեռք են բերվել քաղաքական հնարքի միջոցով, իհարկե՝ վաղ թե ուշ այդ ձայները կորցնելու են: Իսկ եթե քո քաղաքական ուղեկիցը միշտ լինելու է նույնը եւ ոչ թե սեզոնային փոփոխություններ կրի, անշուշտ, դու հնարավորություն ունես պահելու քո ընտրազանգվածը. «Բայց ԲՀԿ-ին ձայն տվեց նաեւ մի հատված, որը փոփոխություններ էր ուզում երկրում: Մի կողմ եմ թողնում՝ արդյոք ԲՀԿ-ն փոփոխություններ բերո՞ղ քաղաքական ուժ է, թե՞ ոչ, բայց այս պահին առավել քան պարզ պետք է լինի, որ ԲՀԿ-ն չի կարող այդ փոփոխությունները բերել, եթե անգամ ազատ է կամ ընդդիմադիր: Այսպես թե այնպես, ԲՀԿ-ն չի կարող պահել այն ամբողջ ձայները, որոնք նա ձեռք է բերել, որովհետեւ դրա մի հատվածը այն մարդիկ են, ովքեր ավանդաբար, այլ պայմաններում կքվեարկեին ընդդիմության օգտին, որովհետեւ փոփոխություն բերող ուժը չի կարող լինել կոալիցիայի անդամ: Իսկ հիմա առավել քան ես կարծում եմ, որ այդ հատվածը չի լինելու ԲՀԿ-ում: Մի բան ակնհայտ է՝ որքան էլ պատկառելի քանակ մնա ԲՀԿ ընտրազանգվածից, միեւնույն է՝ այս ընտրազանգվածի մի հատվածը դեգերումների մեջ է եւ ուզում է փոփոխություններ: Իսկ այդ փոփոխությունները չի կարող տեսնել մի քաղաքական ուժում, որն այլեւս իշխանության մեջ չէ եւ չի կարող բերել այդ փոփոխությունները»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

# Երեւանցիների հետաքրքրությունը սահմանափակվում է միայն ժամանցայի՞ն հաղորդումներով

Ապրիլ ամսվա նախընտրական քարոզչության թոհուբոհի մեջ բոլորովին աննկատ մնաց հեռուստատեսության ոլորտում կատարված մի՝ առաջին հայացքից աննշան, փոփոխություն: Խոսքը «12» (նախկին «Հայ Թիվի») հեռուստաալիքը նոր՝ «Լայմ» անվանումով հեռուստաալիքի վերափոխմանն է վերաբերում: Իսկապես, առաջին հայացքից սա ինչ-որ աննշան բան է թվում, սակայն պետք է նկատել, որ խոսքը սոսկ անվան կամ լոգոյի փոփոխության մասին չէ, այլ՝ որ ազդարարվեց «ժամանցային նոր հեռուստաալիքի» մուտքը հայկական եթեր:

Իսկ ի՞նչ արտառոց բան կա դրանում՝ կհետաքրքրվի ընթերցողը, ի՞նչ վատ է ժամանցային ալիքի ծնունդը: Վատը՝ վատ չէ, բայց…

«Շարկ» ՍՊԸ-ն, որ հիմնադիրն է այդ հեռուստաալիքի, մասնակցել է 2010 թվականի հուլիս-դեկտեմբերին անցկացված թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու 25 մրցույթներից թիվ 15-ին, որի անվանումն է «Ընդհանուր ուղղվածություն, մայրաքաղաքային սփռում»: «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի («Թվային հեռարձակման ցանցը») 7-րդ մասում ասվում է. «Թվային հեռարձակման ցանցի միջոցով Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում եւ Երեւան քաղաքում հեռարձակում է իրականացնում ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող (ընդգծումն իմն է- Մ. Հ.) մեկական տարածքային սփռման մասնավոր հեռուստաընկերություն»: 2010 թվականի հուլիսին հայտարարված 15-րդ մրցույթը հենց սրան էր վերաբերում. հաղթողը՝ թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակման լիցենզիա ստացողը, պետք է ունենար ընդհանուր ուղղվածություն եւ բավարարեր տվյալ տարածքի (այս դեպքում՝ մայրաքաղաքի) բնակչության հետաքրքրությունները: Այսինքն՝ անդրադառնար տեղական (մայրաքաղաքային) խնդիրներին: Մինչդեռ հայտարարելով նոր ժամանցային ալիքի մուտքը՝ լիցենզավորված անձը, ըստ էության, խախտում է լիցենզիայի պայմանները, այն էլ անթաքույց:

Ահա թե ինչ է ասել «Մեդիամաքս»-ի թղթակցին հեռուստաընկերության գլխավոր ռեժիսոր Բագրատ Գրիգորյանը: «Մեր հեռուստաընկերությունն ունի ընդհանուր ուղղվածություն, որի մեջ մտնում են ժամանցը, երաժշտությունը, սպորտը, կինոն, լրատվությունը՝ կապված շոու-բիզնեսի հետ: Քաղաքական լուրեր եւ հաղորդումներ չենք ունենալու» (http://www.aravot.am/2012/05/03/66143/ ): Իսկ մայրաքաղաքային խնդիրներին անդրադառնալու մասին՝ ոչ մի խոսք:




Ստացվում է, որ օրենքով սահմանված «տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող» արտահայտությունը հեռուստաընկերության ղեկավարությունը հասկացել է յուրովի. երեւանցիների հետաքրքրությունը սահմանափակվում է միայն ժամանցային հաղորդումներով, իսկ լրատվությունից նրանք ուզում են լսել միայն շոու-բիզնեսի նորությունները: Հասկացա՞ք, իսկ տարածքի (այս դեպքում՝ Երեւանի) խնդիրների լուսաբանումը, որ տարածքային սփռման բոլոր 11 ալիքների հիմնական ուղղություններից պիտի լինի, այս հեռուստաընկերությանը չի հետաքրքրում: Այս ՀԸ ղեկավարությանը հիշեցնենք, որ մայրաքաղաքային սփռման ժամանցային ուղղվածության էր նույն ժամանակաշրջանում անցկացված թիվ 7 մրցույթը, որին մասնակցել եւ հաղթել է «Ա-Թիվի» ՍՊԸ-ն, եւ եթե մտադիր էիք ժամանցային ալիք լինել՝ մասնակցեիք այդ մրցույթին, մրցակցությունն ավելի հետաքրքիր կլիներ:

Դե, իսկ հիմա եկեք պատկերացնենք, որ մյուս տեղական (մարզային) սփռման ընդհանուր ուղղվածություն ունեցող հեռուստաընկերություններն էլ հանկարծ որոշեն միայն ժամանցային լինել…

Ինչեւէ: Մեր համոզմամբ՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը պետք է մոնիթորինգի ենթարկի այս ալիքը՝ պարզելու համար, թե իր ուղղվածության փոփոխությամբ այն չի՞ խախտել, արդյոք, մրցույթի եւ լիցենզիայի պայմանները:

Հիշեցնում ենք նաեւ, որ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածը նախատեսում է. «Ազգային հանձնաժողովի կողմից հեռուստատեսության եւ ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման (ընդգծումն իմն է- Մ. Հ.) դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաեւ պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության եւ ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերելու եւ դրանց մասին Ազգային հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Ազգային հանձնաժողովը կիրառում է հետեւյալ վարչական տույժերը. 1) գրավոր նախազգուշացում, 2) տուգանք»:

Սպասենք Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի արձագանքին:

ՄԵՍՐՈՊ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ. Գ. Հոդվածին կից ներկայացնում ենք «Լայմի»՝ Մյասնիկյան պողոտայում տեղադրված գովազդային պաստառի լուսանկարը, որպեսզի հեռուստաընկերության ղեկավարները հետո չասեն, թե չեն հայտարարել ժամանցային ալիք լինելը: Լուսանկարը, տողերիս հեղինակի խնդրանքով, արել է Գագիկ Շամշյանը:

# Տնակը ոնց տեղադրեցին, այնպես էլ ապամոնտաժեցին

## Կենտրոնի բնակիչների աչքը վախեցած է՝ մի հատ «բուդկա» են տեսնում, բողոքի ալիք են բարձրացնում

Երեկ Մոսկովյան 8 հասցեի եւ «Պապլավոկ» սրճարանին հարակից օղակաձեւ այգու միջեւ պլաստիկատե տնակ էր տեղադրվել, ինչը հարուցել էր հարակից շենքերի բնակիչների զայրույթը: «Առավոտի» հետ զրույցում բնակիչները դժգոհեցին, որ տնակը խեղաթյուրում է քաղաքի հին թաղամասերից մեկի տեսքը, նաեւ անհանգստություն է պատճառում շենքի բնակիչներին. «Զբոսանքի մի հատ փոքրիկ տարածք ունենք, դա էլ փակում են իրենց «բուդկաներով»: Ուզում ենք վայելել մեր բակը, բայց քթներիս տակ ինչ-որ տգեղ բաներ են տեղադրում: Այդքանից հետո մարդ ցանկություն էլ չի ունենում զբոսանքի դուրս գալու»:

Այս երեւույթն այնքան էր զայրացրել բնակիչներին, որ դիմել էին տնակի «պատասխանատուներին»՝ սպառնալով, որ եթե այդ «բուդկան» չհեռացնեն, ապա իրենք իրենց ուժերով դա կանեն. «Այնպես էի զայրացել, որ նույնիսկ ասացի՝ պատրաստ եմ պայթեցնել ձեր տնակը: Հոգնել ենք արդեն էդ Նուշիկյաններից ու Ալեքսանյաններից, որոնց պատկանում է «Պապլավոկը»: Այգին տնօրինում է Նուշիկյան ասոցիացիան, ու իրենց աշխատողների համար է այս տնակը տեղադրվել»:

Տնակի հայտնվելուց կարճ ժամանակ անց բնակիչներն անմիջապես դիմել են Երեւանի քաղաքապետարանի թեժ գիծ եւ ներկայացրել իրենց դժգոհությունները: Քաղաքապետարանն էլ օպերատիվ կերպով արձագանքել է: Երեկ, երբ «Առավոտն» այցելեց տարածք, տնակն արդեն ապամոնտաժման փուլում էր: Մեզ հետ զրույցում քաղաքապետարանի քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչության տարածքային 4-րդ բաժնի պետ Կարեն Վանյանն էլ հաստատեց, որ բնակիչների ահազանգի հետքերով են եկել տարածք եւ պարզել, որ տնակն այդտեղ տեղադրելու թույլտվություն չկա. «Հայտնաբերեցինք, տնակը չուներ տեղադրման համապատասխան թույլտվություն, եւ միջոցառումներ ձեռնարկվեցին, ու այս պահին այգու տնօրինությունն իր ուժերով ապամոնտաժեց այն»:





«Բուդկան» ապամոնտաժելուց հետո այգեգործական գործիքները նորից հայտնվեցին այգում:

«Առավոտի» հետ զրույցում այգու տնօրեն Ղուկաս Հարությունյանը, որը նաեւ Նուշիկյան ասոցիացիայի վարչատնտեսական ծառայության պետն է, ասաց, որ այդ տնակը նախատեսված էր այգեգործական գործիքների պահեստ լինելու համար, ոչ թե որպես այգու աշխատակիցների հանդերձարան. «Նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանի օրոք հանձնաժողով էր եկել այգի, որը նկատեց, որ գործիքները ուղղակի բաց-բաց տեղադրված են այգու մի հատվածում՝ ծառի տակ: Ասացին, որ այդպես շատ տգեղ է, եւ հենց իրենք էլ խորհուրդ տվեցին փողոցի այս հատվածում տեղադրել մի տնակ, որտեղ կպահվեն բահը, քլունգը, սերմերն ու լճի համար նախատեսված քլորը եւ այլ բաներ: Տնակը թեթեւ կոնստրուկցիայով հավաքված բան էր՝ ծառայելու էր որպես «սարայ»: Ուղղակի բանավոր պայմանավորվածություն ձեռք բերեցինք, մենք էլ, քանի որ չէինք ուզում գազոնի վրա տեղադրել, բերեցինք ու հենց այստեղ էլ դրեցինք»:

Մեզ հետ զրույցում բնակիչներից մեկը դժգոհեց, որ «Պապլավոկի» այգին տնօրինությունը աչքաթող է արել եւ ոչ մի սիզամարգ էլ չի մշակում. «Մենակ փող են աշխատում՝ էդ ատրակցիոնները դրել են ու միայն իրենց եկամուտներն են ապահովում»: Այս առնչությամբ էլ այգու տնօրենը վստահեցրեց, որ Նուշիկյան ասոցիացիան վարձակալությամբ է վերցրել այգու տարածքը, որի շրջանակում պարտավորվածություն ունի այն խնամելու, ինչպես նաեւ քաղաքապետարանից թույլտվություն ունեն տարածքում ատրակցիոններ տեղադրելու եւ մյուսներին վարձակալությամբ տարածք տալու, սննդի փոքրիկ առեւտրի կետեր տեղադրելու. «Այգու տարածքը 1.3 հեկտար է, որի վրա ամսական 1-1.5 միլիոն դրամ ենք ծախսում: Հո մեր գրպաններից չենք տալու, բնական է, որ այգին ինչ-որ տեղից պետք է եկամուտ ունենա, որպեսզի կարողանա ծախսերը փակել»:

Հանուն արդարության նշենք, որ մեր այցելության ժամանակ, որը շատ պատահական էր, այգու աշխատակիցները պարբերաբար հավաքում էին քաղաքացիների կողմից գետնին թափված աղբը՝ դատարկ շշեր, «պոպկորն», պաղպաղակի թղթեր եւ այլն: Բացի այդ, սրճարանին հարակից ջրավազանն էլ, որը կրկին այգու տնօրինության տակ է, բավականին մաքուր եւ զուլալ ջրով էր լցված:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

## «Արմենիա»-ի առաջին չվերթը կկայանա հունիսի 15-ին

«Հարավկովկասյան երկաթուղի» (ՀԿԵ) ընկերությունը, որը հավատարմագրային կառավարման ենք հանձնել ռուսներին, 3 տարիների ընթացքում իրականացրել է 72,1 միլիարդ դրամի ներդրում: Երեկ «Նովոստի» միջազգային մամուլի կենտրոնում տեղի ունեցած ասուլիսում հայտնեց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Վիկտոր Ռեբեցը: Ըստ նրա՝ այդ գումարները ծախսվել են Հայաստանի երկաթուղային ենթակառուցվածքների արդիականացման վրա: Վիկտոր Ռեբեցի տվյալներով՝ վերանորոգվել է մոտ 160 կմ գիծ, փոխվել են մոտ 260 հազար փայտե կոճ, 7,7 հազար երկաթբետոնե կոճ: Վերանորոգվում են նաեւ երկաթուղու կայարանները: Բացի Երեւանի, Արմավիրի, Մասիսի, Գյումրիի եւ Վանաձորի խոշոր կայարաններից՝ վերականգնված են Շահալի ու Փամբակ կայարանները, իսկ մինչեւ տարեվերջ կվերանորոգվի եւս 18 կառամատույց:

Այս տարի ընկերությունը նախատեսել է 1 միլիարդ 150,7 միլիոն ռուբլու չափով ներդրում, որը նույնպես կուղղվի ենթակառուցվածքի վերանորոգմանը: 2012-ին կապիտալ կվերանորոգվի 20 կմ գիծ: Գլխավոր տնօրենի խոսքերով՝ ՀԵԿ-ի աշխատողների միջին ամսական աշխատավարձը կազմում է 157087 դրամ:

Մի շարք ցուցանիշներով, այս տարվա հունվար-ապրիլ ամիսներին թե՛ բեռնափոխադրումների ծավալը, թե՛ արտահանման եւ թե՛ ներմուծման մասով ավելացել է:

Նույն ժամանակահատվածում երկաթուղու ծառայությունից օգտվել է 144,4 հազար ուղեւոր: Այս պահին վերանորոգվում են Երեւան-Բաթում-Երեւան երթուղում գործող «Արմենիա» ֆիրմային գնացքի եւ ներպետական էլեկտրագնացքների վագոնները: Վրաստանում հանգստանալու մեկնել ցանկացողների համար պարոն Ռեբեցը հայտնեց, որ «Արմենիա»-ի առաջին չվերթը կկայանա հունիսի 15-ին:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

Հ. Գ. «Հարավկովկասյան երկաթուղու» գլխավոր տնօրենի ասուլիսը ռուսերեն լեզվով էր եւ չէր ուղեկցվում հայերեն թարգմանությամբ, ինչը «Լեզվի մասին» օրենքի խախտում է:

## Պարոնյան փողոցում կարգավորվում է ջրամատակարարումը



Պարոնյան փողոցում՝ թիվ 21 շենքի դիմաց, մայիսի 23-ին «Երեւան Ջուր» ՓԲԸ-ն վերակառուցում էր հերթական դիտահորը: Հերթական, որովհետեւ մեկ շաբաթ առաջ նույն փողոցում արդեն վերանորոգվել է երկու դիտահոր, ինչը զգալիորեն նպաստել է տարածքի ջրամատակարարման բարելավմանը:

Տվյալ՝ թվով երրորդ դիտահորն իրենից ներկայացնում է խոշոր ջրաբաշխիչ հանգույց, որը կոչված է կարգավորելու Պարոնյան փողոցի եւ հարակից տարածքների, ինչպես նաեւ Կոնդի զգալի մասի ջրամատակարարումը: Կոչված է, բայց չի ծառայում իր նպատակին, որովհետեւ վերանորոգման կարիք ունի, իսկ առկա 4 փականներն ընդհանրապես չեն գործում.

Ինչպես տեղեկացրեց ընկերության «Արեւմուտք» շահագործման տնօրինության «Արաբկիր» տեղամասի գլխավոր ճարտարագետ Գաբրիել Մելիքսեթյանը, իրականացվող աշխատանքների շրջանակներում կփոխարինվեն փականները, որի շնորհիվ հնարավոր կլինի կարգավորել ջրամատակարարումը բոլոր 4 ուղղություններով՝ ամենուր ապահովելով բավարար ճնշում: Դրանից բացի, շինարարական կամ վերանորոգման աշխատանքների ժամանակ այսուհետեւ հնարավոր կլինի դադարեցնել միայն տվյալ տարածքի, բայց ոչ ողջ թաղամասի ջրամատակարարումը, ինչպես մինչ այդ:

Ըստ զրուցակցի՝ աշխատանքներն ընթանում են նախատեսվածի համաձայն, եւ ուշ երեկոյան կվերսկսվի «Նաիրի» բժշկական կենտրոնի, «3-րդ շտապօգնության» հիվանդանոցի, «Հրազդան» հյուրանոցի, Պարոնյան փող. 15-ից բարձր եւ Իսրայելյան 43 համարների, Զորափ եւ Կոնդ թաղամասերի ու հարակից տարածքների ջրամատակարարումը:

## Պլաստմասսե խողովակը՝ պողպատե պատյանի միջով

Աջափնյակի 15-րդ թաղամասի Շիրազ-Մազմանյան փողոցների խաչմերուկում մայիսի 23-ին «Երեւան Ջուր» ՓԲԸ-ն ջրագծի վթարված հատվածն էր փոխարինում:

Տարվող աշխատանքներն առանձնանում էին ոչ թե ծավալով կամ կարեւորությամբ (յուրաքանչյուր աշխատանք համակարգում, ի վերջո, ուղղված է սպառողների ջրամատակարարման բարելավմանը), այլ նրանով, որ ընկերությունը այստեղ նոր տեխնոլոգիա էր կիրառում:

Ըստ «Մաշտոց» շահագործման տեղամասի ջրամատակարարման ինժեներ Մյասնիկ Մելքոնյանի՝ տվյալ խիստ բանուկ խաչմերուկի ասֆալտը չքանդելու, ինչպես նաեւ երթեւեկությանը չխոչընդոտելու նպատակով որոշում էր ընդունվել տվյալ՝ մոտ 45 մ երկարությամբ հատվածում վթարային ջրագիծը ոչ թե նորով փոխարինել, այլ հին պողպատե խողովակի միջով անցկացնել պլաստմասսե խողովակ:

Առավել եւս, որ տեխնիկապես դա մեծ դժվարություն չէր ներկայացնում: Վթարված ջրագծի տրամագիծը 500 մմ էր, մինչդեռ ներքաղաքային բաշխիչ ցանցի վերջին տարիներին իրականացված վերակառուցման ու համակարգում հոսակորուստների նվազեցման շնորհիվ ներկայումս անգամ 100 մմ տրամագծով կարելի էր տարածքի ջրամատակարարումն ապահովել: Դրա համար մասնագետները նախ՝ խողովակների «շուրթերը» տաքացնում էին շարժական էլեկտրակայանի օգնությամբ՝ մինչեւ անհրաժեշտ ջերմաստիճան, այնուհետեւ միացնում իրար եւ հատուկ սարքի միջոցով ամուր եռակցում: Ի վերջո, պատրաստի խողովակաշարը հին ջրագծի միջով առանց դժվարության անցկացնում էին դեպի հանդիպակաց մայթ:

Պլաստմասսե խողովակները կոռոզիայի չեն ենթարկվում, երկարակյաց են եւ դյուրությամբ են մոնտաժվում: Նաեւ՝ գնային առումով են մատչելի: Այս ամենի շնորհիվ համակարգում տարեցտարի ավելանում է պլաստմասսե խողովակների կիրառումը, մասնավորապես՝ ջրագծերի կառուցման նպատակով:

## Ջուր չեն ունենա

«Երեւան Ջուր» ընկերությունը իր հաճախորդներին եւ սպառողներին տեղեկացնում է, որ, վթարի վերացման աշխատանքների հետ կապված, ս.թ. մայիսի 27-ին ժամը 10.00-ից մինչեւ մայիսի 28-ը ժամը 10.00-ը կդադարեցվի Սարմեն, Զարոբյան, Անտառային, Դեմիրճյան, Ֆրիկ, Լեռ Կամսար, Ալիխանյան փողոցների, Պռոշյան 1-ին, Բաղրամյան 1-ին եւ Մոսկովյան նրբանցքների, Բաղրամյան պողոտայի 1-26 համարների, Սարյան փողոցի 2-24՝ զույգ համարների եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

Առավոտ aravot daily
ՈՒՐԲԱԹ 25.05.2012

# «Դատավորը չի կարող ինքն իրեն դատավոր լինել»

## Փաստաբան Լուսինե Սահակյանը բացարկ է հայտնում ճանաչված դատավոր Մխիթար Պապոյանին

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում 22 ամիս է, ինչ քննվում է 2010թ. ամանորից հետո «Մոսկվա» կինոթատրոնից 5 մլն դրամի գողության մեջ մեղադրվող Ստեփան Հովակիմյանի եւ Վահրամ Քերոբյանի դեմ հարուցված քրեական գործը:

Անդրանիկ դատական նիստերը 5 ամիս նախագահել էր նույն տարածքի դատավոր Արմեն Խաչատրյանը, ապա՝ դատավոր Մխիթար Պապոյանը:

Երեկ մի քանի միջնորդություններ հետ կապված դատարանի դիրքորոշումը լսելուց հետո՝ Վահրամ Քերոբյանի պաշտպան, ՀՀ փաստաբանների միության անդամ Լուսինե Սահակյանը, չթաքցնելով իր ափսոսանքը, բացարկ հայտնեց նախագահող դատավոր Մխիթար Պապոյանին: «Հայաստանի Հանրապետությունում նշվում էին մի քանի դատավորներ, որոնք համարվում էին օբյեկտիվ: Դուք նշվում էիք այդ դատավորներից մեկը: Ցավով եմ նշում, որ գործի ընթացքում, մինչ մեր ներգրավվածությունը, դուք անկողմնակալ չեք եղել: Վստահ եմ, դա կապված չէ եղել Ձեր դեպքում Քրեական դատավարության օրենսգրքի վատ իմացությամբ: Դուք տիրապետում եք օրենսդրությանը, ցավոք, թույլ եք տալիս խախտումներ:

Մեր պաշտպանյալները գտնվում են ակնհայտ անազատության մեջ, վաղուց լրացել է նրանց կալանքի ժամկետը (201թ. փետրվարի 6-ից- Ռ. Մ.): Սակայն դատարանը պետք է հայտներ ոչ թե կալանքից, անազատությունից զրկելու մասին իր կարծիքը, այլ այն որոշման, որով նրանց կալանել են»:



Ճանաչված փաստաբանն անդրադարձավ ինքնաբացարկի ինստիտուտին, մասնավորապես՝ հղում անելով ամերիկյան իրավաբանների ընկերակցության փորձագետներին: Ըստ վերջիններին, Հայաստանում բացարկի հարցը լուծում է դատավորն ինքն իր հետ: Ամերիկացիները գտնում են, որ «դատավորը չպետք է ինքն իրեն դատավոր լինի», ընդսմին, ըստ նրանց, նույնիսկ ամենաազնիվ դատավորը մենմենակ մնալով խորհրդակցական սենյակում, չի կարող պահպանել «օբյեկտիվ կանխակալության սկզբունքը»: Լուսինե Սահակյանը միեւնույն ժամանակ շեշտեց, որ նախորդ դատական նիստերի ժամանակ իրենց միջնորդությունները բավարարվել են:

Նա ակնարկեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու հնարավորության մասին, ասելով. «Եթե Եվրոպական դատարան ընդունվելու լինի այս գործը, արդեն իսկ լուրջ խնդիր կծագի, եթե պարզվի, որ բացարկի հարցը լուծել եք դուք»:

Ստեփան Հովակիմյանի պաշտպան, ՀՀ փաստաբանների պալատի անդամ Տիգրան Սաֆարյանը հանդես եկավ մի քանի միջնորդություններով: Նա պահանջում էր, որպեսզի դատարանն ապացույց ճանաչի իրենց իսկ կողմից ներկայացված մի քանի փաստաթղթերը: Խոսքը ոստիկանության Կենտրոնի բաժնում 2010թ. փետրվարի 19-ին բերման ենթարկելու, փաստաբան չունենալու, Ստեփան Հովակիմյանի մեկուսարանի խցի ընկերների հայտարարությունների մասին էր: Խցի 3 ընկերները հայտարարել էին, որ կարող են գալ դատարան եւ պնդել, որ Ստեփանը ոտքերի, մեջքի ցավերից է դժգոհել եւ ասել, որ իրեն դաժան ծեծի են ենթարկել ոստիկանության բաժնում, ինչի հետեւանքով նա տվել է ինքնազրպարտչական բնույթի ցուցմունք:

Պաշտպանական կողմը միջնորդեց նաեւ, որպեսզի իրենց տրամադրվեն «Մոսկվա» կինոթատրոնի քաղաքային եւ փոխտնօրենի բջջային հեռախոսների վերծանումները՝ 2010թ. հունվարի 11-ից մինչ փետրվարի 6-ն ընկած ժամանակահատվածի համար, որպեսզի պարզվի, թե, արդյոք, կինոթատրոնը տեղյա՞կ է եղել գողության մասին, դիմե՞լ է ոստիկանություն:

Հեռախոսային վերծանումների հետ կապված՝ դատարանը նախորդ անգամ մերժել էր այս միջնորդությունը, գտնելով՝ այդ հեռախոսները ոչ կասկածյալներինն են, ոչ մեղադրյալներինը: Իսկ փաստաբան Լուսինե Սահակյանը նկատեց, որ շատ հանցագործություններ են բացահայտվել «այլ անձի հեռախոսային վերծանումների արդյունքում»:

Սակայն դատախազ Սամվել Հարությունյանն առարկեց, ասելով, թե պարզ չի ապացույցների ձեռքբերման, ծագման պատմությունը, հղում անելով Քրեական դատավարության օրենսգրքին, ասաց, թե գոյություն ունի ապացույցների ձեռքբերման ընթացակարգ:

Դատախազն առարկեց նաեւ այն ժամանակ, երբ պաշտպանական կողմը միջնորդեց դատարան հրավիրել փորձագետ Նինոյանին՝ որպես վկա: Այս փորձագետը տվել էր եզրակացություն կինոթատրոնի տեսագրության հետ կապված. «Նկարագրված էր մի տղամարդ, որը պտտվում է տարածքում»:

Իրավաբանական մի առանձին վեճ էլ ծավալվեց այս հարցի շուրջ. Լուսինե Սահակյանը գտնում էր, որ դատարանը պարտավոր է պահպանել կողմերի հավասար մրցակցության իրավունքը: Եթե դատարանը հիմք է ընդունում նախաքննության մարմնի կողմից ձեռքբերված ապացույցները, ապա նույն տրամաբանությամբ պետք է ընդունի իրենց կողմից տրված փաստաթղթերը, դրանք ճանաչի որպես ապացույց, որպեսզի պաշտպանական կողմը հնարավորություն ունենա պաշտպանական ճառի ժամանակ հղում անել դատարանի կողմից ճանաչված ապացույցին: Դատարանը դրանք կցեց գործին, խոստանալով, թե գնահատականը կտա դատական ակտի ժամանակ:

Մի բան, որ կիստակեցվի ինքնաբացարկի հարցը լուծվելուց հետո միայն:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Ջավախահայ քաղաքական գործիչ Վահագն Չախալյանի գործի մասին զեկույցի հրատարակում



Մարդու իրավունքների գծով միջազգային փորձագետ, դոկտոր, Պեկինի Պրետորիայի համալսարանի պրոֆեսոր Ֆերնան դը Վարենը Ֆրանսիայում գործող «Երկիր Եվրոպա» կազմակերպության խնդրանքով պատրաստել է զեկույց՝ ջավախահայ քաղաքական գործիչ Վահագն Չախալյանի գործի քաղաքական-իրավական ասպեկտների մասին:

«Ազգային փոքրամասնություն լինելու վտանգները. Մարդու իրավունքները եւ «Չախալյանն ընդդեմ Վրաստանի» («The Perils of Being a National Minority: Human Rights and Chakhalyan v. Georgia») վերնագիրը կրող զեկույցում Վրաստանի ներքին եւ արտաքին քաղաքական զարգացումների ֆոնի վրա, ինչպես նաեւ վրացահայության եւ ջավախահայության նկատմամբ վրաց իշխանությունների քաղաքականության համատեքստում ներկայացվում է ջավախահայ քաղաքական գործչի ձերբակալման եւ դատավարության, ինչպես նաեւ հետդատական գործընթացների պատմությունը:

Զեկույցում առանձին բաժին է նվիրված Չախալյանի եւ նրա ընտանիքի անդամների իրավունքների հիմնական խախտումներին, որոնք տեղի են ունեցել ինչպես նախքան դատավարությունը, այնպես էլ դատավարության ընթացքում եւ որոնք կոպտորեն ոտնահարում են նրա արդար դատաքննության եւ այլ իրավունքները (Զեկույցի անգլերեն տեքստը կարելի է բեռնել կայքից՝ http://www.yerkir.eu/2012.05.22-Yerkir Europe-ReportHumanRightsViolationsInGeorgia.pdf):

Հիշեցնենք, որ Վահագն Չախալյանը ձերբակալվել է վրաց իշխանությունների կողմից՝ 2008թ. հուլիսի 21-ին: 2009թ. ապրիլի 7-ին նա կոպիտ խախտումներով ուղեկցվող դատավարության արդյունքում դատապարտվել է 10 տարվա ազատազրկման «հանրային կարգը խախտող զանգվածային միջոցառումների կազմակերպման», «խուլիգանության» եւ «զենքի պահպանման» շինծու մեղադրանքներով: Վահագն Չախալյանի գործը ներկայումս քննվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

Սեփ. լր.

### Գայլերը հոշոտել են

Լոռու մարզի Լուսաղբյուր գյուղից հայտնել են, որ մայիսի 22-ին, ժամը 15.00-ի սահմաններում, գայլերը «Գեղի ձոր» հանդամասում հոշոտել են Հ. Չոբանյանին պատկանող 1 խոշոր եղջերավոր անասուն, իսկ «Ճամբար» հանդամասում՝ վիրավորել Դ. Կարապետյանին պատկանող 2 խոշոր եղջերավոր անասուն: Մայիսի 23-ին նույն մարզի Արջուտ գյուղից տեղեկություն է ստացվել, որ ժամը 03.00-ի սահմաններում գայլերը հոշոտել են Ռ. Գասպարյանին պատկանող 8 ոչխար, 8 գառ եւ վիրավորել 10 ոչխար: Մարզպետարանում ստեղծվել է հանձնաժողով, վնասի չափը ճշտվում է:

### Օձի խայթոց

ԱԻՆ փրկարար ծառայության Շիրակի մարզից հայտնել են, որ օձի խայթոցից թունավորումով Գյումրիի «Սամարիթեր» հիվանդանոց է տեղափոխվել Ախուրյան գյուղի Ախուրյանի խճուղու թիվ 2 տան բնակիչ՝ 1987թ. ծնված Աշոտ Խաչատրյանը: Բժիշկների գնահատմամբ՝ տուժածի առողջական վիճակը կայուն-ծանր է:

### Ահազանգ էր ստացվել

Երեւանի Մանթաշյան 5 շենքի 10-րդ բնակարանի բնակիչը չէր արձագանքել դռան եւ հեռախոսի զանգերին: Նշված բնակարանի դուռը բացելով՝ փրկարարները միջանցքում հայտնաբերել են 1932թ. ծնված Նատալյա Սուխովային՝ անօգնական վիճակում: Կնոջը ցուցաբերել են առաջին բուժօգնություն: Իսկ Երեւանի Լենինգրադյան 8 շենքի 38-րդ բնակարանից ջուր է լցվում ներքեւի բնակարան, իսկ բնակիչը չի արձագանքում դռան եւ հեռախոսի զանգերին: Դեպքի վայր է մեկնել հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խումբը: Փրկարարները, ոստիկանության եւ համատիրության աշխատակիցների ներկայությամբ, բացել են բնակարանի դուռը եւ խոհանոցի հատակին հայտնաբերել 1931թ. ծնված Հենրիկ Սահակյանին՝ անօգնական վիճակում: «1-03» ծառայության աշխատակիցները նրան տեղափոխել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Բժիշկների գնահատմամբ՝ տղամարդու առողջական վիճակը ծայրահեղ ծանր է:

### Դեղորայքային թունավորում

Երեւանի Նոր Արեշի 46-րդ փողոցի թիվ 47 տան բնակչուհի՝ 1990թ. ծնված Մելինե Մկրտչյանը ստացել է դեղորայքային թունավորում: Տուժածին ցուցաբերել են առաջին բուժօգնություն, եւ նա հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվելուց:

### Մայիսի 23-ին

«ՎԱԶ-2109» 61 ՍՏ 431 պ/հ ավտոմեքենան Գավառ-Ծաղկաշեն ավտոճանապարհի հարակից սարալանջին արգելափակվել է ցեխակույտի մեջ եւ այն դուրս բերելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Տեղի ուժերով ավտոմեքենան դուրս է բերվել ճանապարհի երթեւեկելի հատված:

# ԱՄՆ-ում արեւը տաք է, բայց չի ջերմացնում

## Նախկին հայաստանցու տպավորությունները

«Հայաստանաբնակ հայերի մոտ այնպիսի կարծիք կա, որ եթե ապրում ես Արաբական Միացյալ Էմիրություններում, ուրեմն մարմնավաճառ ես կամ, լավագույն դեպքում՝ անբարոյական»,- իր տարակուսանքը հայտնեց տիկին Թամարան, ով 2005 թվականից բնակվում է ԱՄՆ Շարժա քաղաքում: «ԱՄԷ-ը մուսուլմանական երկիր է եւ, որպես կանոն, ունի շատ խիստ բարոյական չափանիշներ: Այստեղ՝ փողոցներում, հասարակական վայրերում չես հանդիպի կարճ, բաց զգեստով կնոջ կամ հարբած, հայհոյող տղամարդու, մինչդեռ Հայաստանում դա շատ սովորական բան է, էլ չեմ խոսում «նախատեսված» վայրերում կանգնող մարմնավաճառների մասին»,- նշում է զրուցակիցս:

Տիկնոջ խոսքերով, թեեւ դպրոցական տարիներին վատ չի սովորել աշխարհագրությունը, բայց չգիտեր, որ կա ԱՄԷ, ուր հայտնվելու է ճակատագրի հեգնանքով, 5-րդ տասնամյակը բոլորելուց հետո, Երեւանում թողնելով իր տասնյակ տարիներով ստեղծած, արած-դրած տունը: Շարժայում գտնվելու համար նա ունի հարգելի պատճառ՝ խնամում է թոռներին, քանի որ Հայաստանում աշխատանք չունենալու պատճառով նախ աղջկա, ապա տղայի ընտանիքը հանգրվանեց ԱՄԷ-ում: Թամարան համոզված է. «Լավ կյանքից չէ, որ այսօր հազարավոր ընտանիքներ լքում են հայրենիքն ու օտար երկրներում բախտ որոնում՝ ամեն ինչ սկսելով զրոյից, չէ՞ որ դրսում էլ հաց վաստակելը հեշտ չէ, բայց այլ ելք չունեն: Ամբողջ կյանքս աշխատել եմ, բայց անկախացումից հետո հերթով փակվեցին բոլոր գործարանները, աշխատատեղերը, ամբողջ ընտանիքով մնացինք առանց աշխատանք, ինչ էր մնում անելու, ոնց ապրեինք…»:



Սկզբում դժվար էր. օտար երկիր, լեզու չգիտեր, սակայն ունենալով շփվող, կենսուրախ բնավորություն, կամաց-կամաց սովորում է անգլերեն, ինչն օգնում է նրան ծանոթանալ ու հաղորդակցվել բազմահարկ շենքում ապրող բազմազգ հարեւանների անց ու դարձին, դարդ ու ցավին, անգամ «հայավարի» հասնում է, օգնում՝ մի քանի ժամ երեխայի է պետք զբաղեցնել, թե խանութից է պետք ինչ-որ բան բերել: Արձակուրդ գնացող հարեւանները նրան են վստահում իրենց տան բանալիները: Չնայած այս ամենին, տիկինը կարոտով է հիշում Հայաստանը. «Հայ հարեւանն ուրիշ է, այստեղ չկա հայկական անմիջականությունը, ջերմությունը, ոչ ոք քեզ իր տուն չի հրավիրի սուրճ կամ թեյ խմելու, միայն դրսում հանդիպում են, ջերմ բարեւում, անցնում: Քիչ թե շատ արաբ հարեւաններն են շփվում, քանի որ շատերը Սիրիայից ու Լիբանանից են, լավ գիտեն հայերին, նրանց սովորույթները»:

Այս ամենն, իհարկե, ուրախացնում է տիկին Թամարային, սակայն երջանիկ չէ, քանի որ կգերադասեր մնալ իր երկրում՝ ամուսնու, հարազատների մոտ: Մինչդեռ ստիպված է պապինել երեխաներին, ժամանակ առ ժամանակ որոշ գումար ուղարկելով Երեւանում մնացած գործազուրկ ամուսնուն, որպեսզի վերջինս կարողանա իր գոյությունը պահպանի:

Տիկին Թամարան, թոռներին խնամելուց զատ, դասավանդում է նաեւ բարեգործական հիմունքներով գործող Շարժայի հայկական կիրակնօրյա դպրոցի մանկապարտեզի՝ «բողբոջ» դասարանի երեխաներին: Նրա տեղեկացմամբ՝ դպրոցում հատ ու կենտ հայաստանցի երեխաներ կան, քանի որ ուսուցումն արեւմտահայերեն է: Այստեղ ուսուցումն էլ է տարբեր՝ հայեցի են դաստիարակվում, ազգային ոգին բարձր է, բոլոր դասարաններում ամեն անգամ դասը սկսվում է «Հայր մերով», ավարտվում՝ Հայաստանի հիմնով: Նա ուրախությամբ փաստեց, որ վերջին տարիներին սերտացել է մշակութային կապը Հայաստանի հետ, հաճախ են հայ երգիչ-երգչուհիներն այցելում: Տեղի հայ համայնքը ջերմ է ընդունում, քանի որ քաղց ունեն ազգային մշակույթի նկատմամբ:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԲԱՂՄԱՆՅԱՆ

Երեւան-Շարժա-Երեւան

# Բջջայինով դիմորդներին քննությունից կհեռացնեն

## Զգուշացնում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնի մամուլի քարտուղարը

Հունիսի 1-ից Հայաստանի բոլոր մարզերում ձեւավորված 40 քննակենտրոններում կմեկնարկեն պետական ավարտական եւ միասնական քննությունները, որին մասնակցելու հայտ է ներկայացրել 16845 դիմորդ, իսկ ԼՂՀ-ում ձեւավորված 8 քննակենտրոններում՝ հայտագրված է 1260 դիմորդ:

ՀՀ կառավարության աշխատակազմի Գնահատման եւ թեստավորման կենտրոնի մամուլի խոսնակ Գայանե Մանուկյանը մեզ հետ զրույցում տեղեկացրեց, որ բոլոր քննասենյակներում տեղադրված կլինեն տեսախցիկներ, եւ ծնողները մոնիտորների միջոցով կարող են հետեւել, թե ինչ է կատարվում քննասենյակներում: «Բացի այն, որ քննասենյակում տիրող իրավիճակը տեսախցիկների միջոցով կփոխանցվի մոնիտորին՝ այդ կերպ ուղիղ կապ ստեղծելով քննասենյակի ու ծնողի միջեւ, նաեւ կտեսագրվի քննության ամբողջ ընթացքը, որպեսզի հետագայում, եթե խնդիրներ առաջանան կամ հարցեր լինեն, տեսագրության միջոցով կարողանանք վեր հանել այն պատկերը, որը առկա է եղել քննասենյակում»,- հավելեց Գայանե Մանուկյանը:

Հարցին՝ քննակենտրոններում տեղադրվելու են խլացուցիչներ, մամուլի քարտուղարը պատասխանեց. «Երբ խլացուցիչների հետ կապված հարցադրում է լինում, միշտ փորձում եմ շրջանցել այդ թեման, քանի որ ներքին անհամաձայնություն ունեմ այդ իրողության հետ՝ կնախընտրեինք, որպեսզի երբեւիցե անհրաժեշտություն չզգացվեր դիմելու այդ սարքին: Լիահույս եմ, որ մոտ ապագայում փոխադարձ վստահությունն այն աստիճան բարձր կլինի մեր հասարակությունում, որ խլացուցիչները կբացակայեն քննակենտրոններից: Դիմորդը եւ նրան քննակենտրոն ուղեկցող ծնողը շատ լավ գիտեն, որ արգելվում է քննության ներկայանալ բջջային հեռախոսով, սակայն քննություն հանձնողների գրեթե կեսից ավելին քննասենյակ է մտնում բջջայիններով, փորձում թաքցնել դրանք՝ հույս ունենալով որպես «հուշարար» օգտագործել: Այդ իսկ պատճառով քննության կազմակերպիչները դիմում են ծայրահեղ քայլի՝ քննակենտրոններում տեղադրելով խլացուցիչներ: Քանի որ խոսք գնաց այդ մասին՝ շեշտեմ, որ



եթե դիմորդի մոտ հայտնաբերվի հեռախոս, նրան անմիջապես կհեռացնեն քննությունից»: Մեր զրուցակիցը տեղեկացրեց, որ այս օրերին ԳԹԿ վերապատրաստումների բաժինը դասընթացներ է կազմակերպում քննական գործընթացում ներգրավված անձանց հետ (նրանք ոչ միայն ԳԹԿ աշխատակիցներ են, այլ ուսուցիչներ, հ/կ-ների ներկայացուցիչներ) եւ նրանց հստակ հրահանգվել է՝ դիմորդի մոտ հեռախոսի առկայության դեպքում նրան անմիջապես հեռացնել քննությունից:

Գայանե Մանուկյանից հետաքրքրվեցինք, թե որ մարզում քանի դիմորդ կա այս տարի, եւ քանի քննական կենտրոն կձեւավորվի յուրաքանչյուր մարզում:

Ըստ այդմ՝ Երեւանում դիմորդներների թիվը 5981 է ( 2010թ.՝ 6161 է եղել): Երեւանում կձեւավորվի 14 քննական կենտրոն, Արագածոտնի մարզից 727 դիմորդ կա (2010թ.՝ 730). այս մարզում կձեւավորվի 2 քննակենտրոն:

Արարատի մարզում դիմում-հայտ է ներկայացրել 1238 դիմորդ (2010թ.՝ 1119). այստեղ կգործի 3 քննական կենտրոն:

Արմավիրում 1267 դիմորդ է հայտ ներկայացրել (2010թ.՝ 1330), եւ կլինի 3 քննակենտրոն: Գեղարքունիքում դիմում-հայտ է ներկայացրել 1216 դիմորդ (2010թ.՝ 1248). կձեւավորվի 3 քննակենտրոն:

Լոռու մարզից 1437 դիմորդ կա. (2010թ.՝ 1430). քննակենտրոններն էլ 3-ն են, Կոտայքի մարզում 1310 դիմորդ է հայտ ներկայացրել (2010թ.՝ 1293) ու էլի 3 քննակենտրոն: Շիրակի մարզում դիմորդների թիվը 1540 է (2010թ. 1522). Շիրակը 3 քննակենտրոն է ունենալու:

Սյունիքի մարզում քննության դիմում-հայտ է ներկայացրել 937 դիմորդ (2010թ.՝ 838): Այս մարզում կձեւավորվի 3 քննակենտրոն՝ 2-ը Գորիսում, 1-ը՝ Կապանում:

Վայոց ձորից քննություն կհանձնի 408 դիմորդ (2010թ.՝ 381)՝ 1 քննակենտրոնում: Տավուշի մարզում 784 դիմորդ է դիմում-հայտ ներկայացրել (2010թ.՝ 728). այստեղ 2 քննակենտրոն կգործի:

Դիմորդների թվի կտրուկ աճ է արձանագրվել Արցախի Հանրապետությունում: Այստեղ 2010թ.-ին դիմորդների թիվը եղել է 876, իսկ այս տարի դիմում-հայտ է ներկայացրել 1260 դիմորդ: Արցախի Հանրապետությունը կունենա 8 քննական կենտրոն:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# «Մի հոգի կա՝ անունը չեմ ուզում հոլովել»

## Արա Գեւորգյանը՝ իր եւ Գիլանի համագործակցության եւ «չուզողների» մասին

Ճանաչված երգահան Արա Գեւորգյանը նոր նախագծի շուրջ համագործակցել է լեգենդար Deep Purple ռոք խմբի մենակատար Յան Գիլանի հետ: Աստղը Արա Գեւորգյանին առաջարկել է խմբի ամենահայտնի ստեղծագործություններից մեկին՝ Holly water-ին հայկական էլեւէջներ հաղորդել եւ այժմ հայկական «համուհոտով» Holly water-ը պատրաստ է, դուդուկի պարտիան էլ կատարում է Արշակ Սահակյանը:

Վաճառքից գոյացած ողջ հասույթը ուղղվել է Գյումրիի թիվ 6 երաժշտական դպրոցի վերակառուցմանը:

Deep Purple-ը հայազգի երգահանին մեծ հոնորար է առաջարկել, սակայն, ինչպես Aravot.am-ի հետ զրույցում նշեց պարոն Գեւորգյանը, ինքը հրաժարվել է գումարից՝ քանի որ Գիլանի հետ 20 տարվա ընկերներ են, իսկ նա համարվում է մեր երկրի բարեկամ: «Ես հոնորարից հրաժարվեցի՝ հաշվի առնելով բավական երկար բարեկամությունը, նաեւ այն, որ երկրաշարժի զոհերի հիշատակի առիթով ու աղետի գոտում իրենք մեծ գործ են արել, երաժշտական դպրոց հիմնադրել, դրամական օգնություն են ցույց տալիս դպրոցին: Յան Գիլանն ու իր ընկերները՝ աշխարհի ամենահայտնի նվագախմբերից, միասին կատարում են մի ստեղծագործություն, որը կոչվում է Smoke on the Water, որի ողջ հոնորարը ուղղվել է աղետի գոտի եւ այսօր էլ նույն նախագիծը 20 տարի անց թարմացվել է՝ ժամանակակից շնչով ու կրկին վաճառվում է եւ այդ գումարով հոգում են Գյումրիի դպրոցի ծախսերը»,- ասաց Արա Գեւորգյանը:

Խնդրեցինք, որ պատմի, թե ինչպես է կայացել իր եւ Յան Գիլանի առաջին հանդիպումը: «1989 թվականն էր, երբ ինքը եկավ Հայաստան՝ իր նվագախմբով, երկրաշարժից հետո: Ցանկություն ուներ, որ հենց օդանավակայանում դիմավորեմ նրան, բայց չէի մտածում, որ պիտի մեկ շաբաթ ամբողջ օրը լինեմ իր հետ եւ նույնիսկ նույն բեմահարթակում նվագեմ իր համերգի մեջ: Ի դեպ, այն ժամանակ դուդուկահար Արսեն Գրիգորյանի հետ Յան Գիլանի երգին կպցրեցինք «Սեւ մութ ամպեր» ստեղծագործությունը ու փաստորեն բեմի վրա միասին հանդես եկանք»,- հիշեց երգահանը:

Արա Գեւորգյանին հարցրինք՝ իր կարծիքով Հայաստանի երաժշտաշխարհի մարդիկ ոգեւորվա՞ծ են Գիլանի հետ իր համագործակցությունից, թե՞ խանդում կամ նախանձում են: «Ես գլուխս կախ՝ իմ սիրելի գործով եմ զբաղված, բայց կլինեն էդպիսի մարդիկ… ավելի շուտ մի հոգի կա, որն ասում է՝ քո երաժշտությունը չեմ սիրում, հայտնի մարդ է, ուղղակի անունը չեմ էլ ուզում հոլովել…»,- ասաց նա:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Առավոտ aravot daily
ՈՒՐԲԱԹ 25.05.2012

VIVACELL MTS ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Մ-19. այսօր՝ Հայաստան-Բելգիա



Այսօր ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների հավաքականն Իտալիայում ընթացող այդ տարիքային խմբի Եվրոպայի 11-րդ առաջնության էլիտ ռաունդի 7-րդ խմբում հանդիպելու է Բելգիայի իր հասակակիցների հետ, իսկ զուգահեռաբար պայքարելու են Իտալիան եւ Իսպանիան: Հայ ֆուտբոլիստներն ընտրական փուլի արգելքը հաղթահարել են անցած տարվա աշնանը՝ 10-րդ խմբում Հունաստանից հետո գրավելով երկրորդ տեղը, որին զիջել էին 1:2 հաշվով եւ պայքարից դուրս թողնելով Սլովակիայի եւ Անդորրայի ընտրանիներին, որոնց նկատմամբ առավելության էին հասել, համապատասխանաբար, 2:1 եւ 1:0 հաշվով:

Իտալիայում՝ «Միգիանո Ադրիատիկո Նուովո» ստադիոնում կայացած մեկնարկային հանդիպումում Վարազդատ Ավետիսյանի սաները Եվրոպայի գործող, իսկ ընդհանուր առմամբ՝ հնգակի չեմպիոն իսպանացիների հետ խաղի միայն լրացուցիչ ժամանակի վերջին վայրկյաններին գոլ բաց թողեցին ու դաշտից հեռացան պարտված՝ 1:2: Դա բավականին դժվարացրեց հուլիսի 3-ից 15-ը Էստոնիայում կայանալիք եզրափակչի միակ ուղեգիրը նվաճելու հեռանկարը: Նույն խմբում Իտալիան նույնպես 2:1 հաշվով պարտության մատնեց մեր այսօրվա մրցակցին:

Առաջին տուրից հետո մրցաշարային աղյուսակում հավաքականները դասավորվել են այսպիսի հաջորդականությամբ:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իսպանիա | 1 | 1 | 0 | 0 | 2-1 | 3 |
| 2. Իտալիա | 1 | 1 | 0 | 0 | 2-1 | 3 |
| 3. Բելգիա | 1 | 0 | 0 | 1 | 1-2 | 0 |
| 4. Հայաստան | 1 | 0 | 0 | 1 | 1-2 | 0 |

Էլիտ ռաունդի վերջին խաղը մեր տղաները կանցկացնեն մայիսի 28-ին: Այդ օրը նրանք ուժերը կչափեն դաշտի տերերի՝ իտալացիների հետ:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

## Բաքվում օլիմպիական խաղեր չեն անցկացվի

Բաքուն եւ Դոհան պարտվեցին 2020 թվականի ամառային օլիմպիական խաղերը հյուրընկալելու համար պայքարում: Այս մասին ասվում է ՄՕԿ-ի տարածած հայտարարությունում:

Մրցավազքը շարունակում են Տոկիոն, Ստամբուլը եւ Մադրիդը: Հատուկ արարողությունը, որի ժամանակ հայտարարվելու է 2020 թվականի օլիմպիական խաղերի մայրաքաղաքի անունը, կկայանա 2013 թվականի սեպտեմբերի 7-ին՝ Բուենոս Այրեսում: Նախապես ընտրավազքի ցուցակում էր նաեւ Հռոմը: Սակայն ավելի ուշ Իտալիայի իշխանությունները երկրում տիրող սոցիալ-տնտեսական վիճակի պատճառով հրաժարվեցին այդ գաղափարից:

## Բրոնզե մեդալներ՝ Բելառուսից



Հուլիսի 1-ից 6-ը Պորտուգալիայի Անադիա քաղաքում անցկացվելու է հեծանվավազքի Եվրոպայի երիտասարդական առաջնությունը, որին մասնակցելու են Հայաստանի հեծանվային սպորտի հանրապետական դպրոցի սաներ Էդվարդ Մաթոսյանն ու Վարշամ Դարբինյանը:

Այս երկու հեծանվորդները, որպես պատասխանատու, մեկնարկի նախապատրաստական փուլ հանդես եկան Բելառուսի երիտասարդական բաց առաջնությունում: ՀԱՕԿ-ի լրատվական ծառայությունը տեղեկացնում է, որ Էդվարդը 128 մասնակիցների պայքարում վեց մրցաձեւից բաղկացած բազմամարտում (օմնիում) բրոնզե մեդալ է նվաճել հինգ միջանկյալ եզրագծով 25 կմ մրցաձեւում եւ մեկ վերջնագծով 15 կմ խմբային վազքում: Նա իր հաշվարկին մեկ մեդալ էլ գրանցել է բազմամարտում՝ վեց մրցաձեւերի ընդհանուր արդյունքով: Իսկ ինչ վերաբերում է Վարշամին, նա խմբային օլիմպիական մրցավազքում եզրափակել է լավագույն վեցյակը:

Ա. Հ.



## Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակությունները



Երեկ Երեւանի պետական համալսարանում կայացավ ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Նորայր Պողոսյանի «Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակություններ» վերնագրով գրքի շնորհանդեսը: Հրատարակությունը նվիրված է Հայ գրատպության 500-ամյակին: Aravot.am-ի հետ զրույցում հեղինակն ասաց, որ 1512 թվականից տպված հայկական գրքերի էջերին կամ կազմին պահպանվել են հայ գրագետ մարդկանց (գիրքը նվիրողների, գնողների, գրքեր վերանորոգողների) ձեռքով գրված գրություններ: Հենց այդ է, որ պարոն Պողոսյանը ներկայացնում է իր գրքում:

«Դրանք պարունակում են լեզվական, պատմական, ազգագրական եւ այլ փաստեր: Հիշատակագրողներից մեկը նշել է իր կողմից գնված գրքի անունը ու թե որքանով է այն ձեռք բերել: Դրանով էլ մենք կարողացել ենք պատկերացում կազմել այդ ժամանակի գրքի գնի, գիրքը ստեղծելու, գրքի տարածման աշխարհագրական միջավայրի մասին: Այս ամենն էլ կարեւորելով՝ ծնվեց գիրքը գրելու ցանկությունը»,- ասում է հեղինակը:

«Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակություններ»-ի մեջ քննվել են 200 տարվա ընթացքում (1512-1712թթ.) տպագրված հայերեն գրքերում հանդիպող ձեռագիր հիշատակագրությունները: Պողոսյանի կարծիքով, դրանք հարուստ նյութ են՝ վաղ աշխարհաբարի ուսումնասիրման համար:

Նորայր Պողոսյանն իր գրքի վրա աշխատել է մոտ 2 տարի, գիրքը տպագրվել է ԵՊՀ հովանավորությամբ: Տեղեկությունների աղբյուրներ հանդիսացել են գրադարաններում պահվող հնատիպ գրքերը: Հեղինակի խոսքով, կարելի է շարունակել ուսումնասիրությունները ու քննել նաեւ եվրոպական գրադարանները. «Ամեն նոր հիշատակարան ուսումնասիրելիս՝ նոր փաստեր ես հայտնաբերում մեր ժողովրդի պատմությունից»:

ԱՐԱՄ ԱՐԱՐԱՏՅԱՆ

# «Այս խորհրդարանական ընտրությունները կարժանանան միջակ գնահատականի»

## Այս կարծիքին է փորձագետը

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի փորձագետ Էդգար Վարդանյանը խոսեց ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի հայաստանյան ընտրությունների մասին կազմած զեկույցներից, որի վերաբերյալ ինքն անցկացրել է հետազոտություն:

«Հասարակությունը չունի ադեկվատ ընկալում, թե ընտրությունները դիտարկող կազմակերպություններն ինչպիսի դերակատարություն ունեն եւ հաճախ տարբեր տեսակի կազմակերպությունների զեկույցներ ճիշտ չեն մեկնաբանվում: Մյուս կողմից՝ ակնհայտորեն կա հետեւյալ միտումը՝ քաղաքական ուժերը վերցնելով դիտորդական կազմակերպությունների զեկույցների առանձին հատվածներ՝ օգտագործում են դրանք իրենց քաղաքական նպատակների համար: Հենց այս նկատառումներից ելնելով էլ փորձել եմ կատարել համապատասխան հետազոտություն»,- ասաց Վարդանյանը:

Իսկ թե ինչու է նա վերցրել հենց ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի զեկույցները ուսումնասիրել, պատասխանեց. «ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը ընտրություններ դիտարկող ամենահեղինակավոր կազմակերպությունն է եւ առավել մանրամասն է կատարում դիտարկում: ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի զեկույցներին են հիմնականում հղում կատարում քաղաքական ուժերն ու եվրոպական կառույցները»: Վարդանյանը նշեց, որ դիտարկել է ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ամփոփիչ զեկույցները: Դրանք հետազոտության եւ համեմատության ենթարկել ըստ ընդհանուր գնահատականների՝ ՔԼՄ-ներով քարոզչության լուսաբանումը, քվեարկության գործընթացը եւ ձայների հաշվարկը. «Այս մասերն եմ առանձնացրել, քանի որ դրանք ամենակարեւոր մասերն էին: Բացի այդ՝ հիմնականում այս բաղադրիչների վրա է կազմվում զեկույցն ու տրվում գնահատական»:



Վարդանյանը հավելեց, որ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը 1996 թվից սկսած դիտարկել է հայաստանյան ընտրություններն ու իր հետազոտության մեջ առկա են բոլորը, բացի վերջին խորհրդարանական ընտրությունները:

Վարդանյանի անցկացրած հետազոտությունը ցույց է տվել, որ 1996 թվից սկսած՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը հայաստանյան ընտրությունները չի դիտարկել իբրեւ ազատ, անկախ, թափանցիկ ընտրություններ: Եվ ամենաբարձր ընդհանուր գնահատականը եղել է հետեւյալը. «Մեծ մասամբ համապատասխանել է միջազգային չափանիշներին»: Նրանք չեն ասել ամբողջությամբ, ասել են մեծ մասամբ, իսկ դա նշանակում է, որ եթե ամբողջությամբ չի համապատասխանել, ուրեմն մեր ընտրությունները ժողովրդավարական, ազատ եւ արդար չեն եղել: ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ը համեմատական մոտեցում է ցուցաբերել: Նա ցույց է տվել, որ ընդհանրապես կարող են չհամապատասխանել, կամ՝ մասամբ համապատասխանել. տարբերություն կա մասամբ եւ ընդհանրապես չհամապատասխանելու միջեւ: Ճիշտ է, երկու տարբերակում էլ դրանք ժողովրդավարական չեն համարվում, բայց կա որակական տարբերություն»:

Ըստ Վարդանյանի՝ համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ խորհրդարանական ընտրությունները համեմատաբար ավելի բարձր գնահատականի են արժանացել, քան նախագահականը: Մասնավորապես՝ 1999 եւ 2007թթ. խորհրդարանական ընտրությունները մնացած բոլորի համեմատ, ըստ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի, ամենալավն են եղել, իսկ ամենավատ գնահատականները տրվել են 2003թ. նախագահական ընտրություններին, հատկապես ձայների հաշվարկի մասով: 2008թ. նախագահական ընտրությունները բացասական գնահատականի առումով երկրորդն է: Մի քանի ընտրությունների տրվել է միանշանակ բացասական գնահատական, նշվելով, որ դրանք չեն համապատասխանում միջազգային չափանիշներին. դրանք են՝ 1998 եւ 2003թթ. նախագահական ընտրությունները: Իսկ 1999 եւ 2003թթ. խորհրդարանականի մասով նշվել է առաջընթացի մասին: Իսկ թե ինչպիսին կլինի ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի 2012 թ. խորհրդարանական ընտրություններին տված գնահատականը՝ Վարդանյանն ասաց. «Իմ կարծիքով՝ այս ընտրությունները կարժանանան միջակ գնահատականի: Այսինքն՝ ոչ շատ լավ, ոչ էլ՝ վատ»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ